ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2023

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 5

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Մաղթում ենք հաջողություն

Մաս 1

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը (փակագծերում նշվածներից որևէ մեկը):

1) շա-անակ, անհար-ի, հար-ահավաք (**գ** կամ **կ**)
2) խոչ-նդոտ, լուս-նկա, կոր-նթարդ (**ը** կամ –)
3) հա-շտակել, թ-րտալ, ընդհու- (**պ** կամ **փ**)
4) տա-տուկ, շ-թա, թ-թապանակ (**ղ** կամ **խ**)

2 Ո՞ր շարքի հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

1) ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ
2) ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ՍԵԾ ՄԱՍԻՍ, ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ
3) ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ, ԱՇՈՏ Գ ՈՂՈՐՄԱԾ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ
4) ԺԱՆՆԱ ԴԸ ԱՐԿ, ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱ, ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերում սղում կա:

1) կապտել, կարծրասիրտ, սանրվածք
2) մանրախնդիր, քնքշագին, թուլակազմ
3) բարձրահոն, աշնանային, կանխատեսել
4) հարստություն, քաղցրախոս, մեղրածոր

4 Ո՞ր շարքի բառերից ոչ մեկը հոլովվելիս *չի* հնչյունափոխվում:

1) ճիգ, ջուր, բնագետ
2) բուրդ, բույս, կես
3) հանդես, քիմք, թիմ
4) դասատու, էջ, աղջիկ

5 Ո՞ր շարքի բառակապակցությունների ընդգծված բառերն են համանուններ:

1) <u>**բարի**</u> մարդ – <u>**բարի**</u> լուր
2) հայոց <u>**լեզու**</u> – <u>**լեզու**</u> առնել
3) <u>**աղի**</u> ջուր – <u>**աղի**</u> բյուրեղներ
4) <u>**ծանր**</u> ճամպրուկ – <u>**ծանր**</u> լռություն

6 Ո՞ր տարբերակում են ճիշտ գրված բոլոր այն համարները, որոնցով նշվածները տեղի պարագա են:

Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ <u>***1. երկրի***</u> *կարոտը անքուն,*
Ու թևերն ահա <u>***2. փռած***</u> *տիրաբար*
Թռչում է հոգիս, թռչում <u>***3. դեպի տուն:***</u>
<u>***4. Ուր***</u> *որ հայրենի* <u>***5. օջախի առաջ***</u>
Վաղուց կարոտով սպասում են ինձ...

1) 1, 2, 4
2) 1, 3, 5
3) 3, 4, 5
4) 2, 4, 5

7 Ո՞ր հատվածում դարձվածք ***չկա:***

1) Այս դարն էլ բարով մաշեք, լեռնե՛ր,
Հավերժությունն էլ մինչև անգամ:
Ես ձեր կարոտից պիտի մեռնեմ,
Դուք չիմանաք էլ՝ կամ, թե չկամ:
2) Խելքս բան չի կտրում
Այս աշխարհի բանից:
Ծիածանի վրա
Կարապներ են թառում:
3) Ներումն աղերսեց մեղավորն ու գութ
Եվ նեղն ընկածի լացով ինձ նեղեց:
Ու ես ներեցի… Բայց ամբողջ կյանքում
Ներելուս համար նա ինձ չներեց:
4) Անտառի խոր ու խրթին
Լռությունն է երերում…
Նախանձում եմ ծղրիդին.
Երգում ու չի երևում:

8 Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ***ան*** հոլովման:

1) աշուն, արյուն, հաստատում
2) գայլաձուկ, ընդմիջում, մանուկ
3) ձիաբեռ, շարժում, հենասյուն
4) անկյուն, բացում, նախադուռ

9 Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:

1) Նրանք քսան մարդուց պակաս չեն լինի, գուցե նույնիսկ երեսուն մարդ. ես ինչպե՞ս կարող եմ միայնակ հաղթել այդպիսի մեծ բազմությանը:
2) Շարունակելով նայել դիտափողով՝ տեսա՝ ինչպես նրանք վազեցին մակույկների մոտ:
3) Մինչ այդ նրանք երևի ընկած էին մակույկների մեջ՝ ձեռքներն ու ոտքերը կապկապած:
4) Ես դանդաղ քայլերով գնացի առաջ վազող վայրենիների դիմաց՝ նշան անելով նրան, որ մոտենա ինձ:

10 Ո՞րն է տրված նախադասության քերականական և տրամաբանական ճիշտ շարունակությունը:

Սանդուղքներով իջնելիս նա ուզում էր հավաքուն մտնել՝ կոտրած տախտակը տեսնելու, ...

1) թեև ինքն էլ զարմացավ, թե ինչու է առանց ճրագի մառանը մտել:
2) բայց մառանի դռանը մոտեցավ, դուռը թեթև հրեց ու ներս մտավ:
3) ինչպես դատարկ մառանը, ուր գերանների վրա սարդերը ոստայն են հյուսել:
4) ուստի մի քիչ էլ կանգնեց ու մառանից դուրս եկավ:

11 Ո՞ր հատվածում համեմատություն կա:

1) Վառվեցին ամպի փետուրներն օդում,
   Եվ հանկարծակիի եկած արտույտի
   Գանգրահեր երգը մնաց կոկորդում:
2) Կապտեցին կարմիր կողերը լեռան,
   Եվ մայրամուտը մեռավ ձորերում,
   Եվ աչքերիս մեջ շողերը մեռան:
3) Ինչ-որ հոգնություն կա տերևի մեջ,
   Ինչ-որ ցուրտ է մտել սիրտն անտառիս,
   Աշնան համ կա արդեն արևի մեջ,
   Եվ ջրերից աշնան հոտ է գալիս:
4) Ձգտել եմ և՛ ինձ նման լինել,
   Ե՛վ նման լինել բնությանը,
   Ծիծեռնակի պես գալ ու գնալ,
   Արծվի պես ցմահ մնալ տանը:

12 Ո՞ր նախադասության մեջ տրոհվող որոշիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1) Մեր ժայռերը վայրի ու խոժոռ են բայց ոչ մի թաքստոցում ավազակ չկա:
2) Գոմեշը երազի մեջ տեսնում էր թե լիզում է իր հիվանդ ձագի ճակատը ու ձագը նվում է թույլ տնքոցով:
3) Մեր թիկունքում մենք դեռ զգում էինք նրա հայացքը սառն ու օտարոտի:
4) Ես հանեցի քաթանե կոշիկս ու հագա նոր տրեխները հորս գործածները:

13 Նախադասությունները դասավորե՛լ տրամաբանական ճիշտ հաջորդականությամբ: Գրե՛լ միայն նախադասությունների համարները:

1. Մեծ հովտի հեղեղատները կլոր տարի ցամաք էին, բայց գարնան մի կարճ ժամանակ լցվում ու խեղդվում էին:
2. Ապա ծաղկունքը փոխվում էր խոնարհ պտուղների, հովիտը խամրում էր, մեղմ արևը ծանր շոգ էր դառնում, ջրերը նվաղում էին, և մեր սրտերը՝ թմրում:
3. Գարնան ջրերը հորդում էին, և ջրերի հետ հովիտը ծաղկում էր ու մեր սրտերը լցնում ուրախությամբ:
4. Դա լինում էր այն ժամանակ, երբ բլուրներում գարնան ձնհալը սկսվում էր. ամբողջ հովիտը զարթնում ու որոտում էր:

Պատասխան՝ _____

14 Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Տեղացիները լեռնագնացներին բարձունքը հաղթահարելու մի քանի կարևոր ցուցմունքներ տվեցին՝ զգուշացնելով ուշադիր լինել և շրջանցել վիհերն ու խորխորատները:

Պատասխան՝ *սխալ է՝* _____

պետք է լինի՝ _____

15 Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Կինը, արցունքն աչքերին, չորսը փութ ցորեն էր խնդրում մինչև հունձը:

Պատասխան՝ սխալ է՝ _____

պետք է լինի՝ _____

16 Տրված բառերը տեղադրե՛լ բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համա-պատասխան փոփոխությունների:

Միայն քնի մեջ է մարդ իրեն լիարժեք ....., միայն քնի մեջ ենք ճանաչում ինքներս ..... ու հեռավոր մեր երկիրը, մեր ..... անունները, ... պահերի իմաստը:

(զգալ, ապրել, հայր, ես)

Պատասխան՝ 1. _____ *2.* _____

3. _____ *4.* _____

Մաս 2

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Եղբորս՝ Գևորգին, ես միշտ հիշում եմ անհուն բերկրանքով, որովհետև նա մեր տան գրեթե միակ անդամն էր, որ ազատ էր ջղայնությունից: 2. Ամեն մի բարկություն նա հավասարեցնում էր բացարձակ զրոյի: 3. Պատահում էր, որ մեկնումեկը լցվում էր նսեմ զայրույթով. աչքեր էին փայլատակում, բարձրանում էր որոտ, որ գալիս էր ոչ թե երկնքից, այլ սենյակի հատակից՝ դեպի առաստաղը: 4. Գործը հասնում էր Գևորգին. մի մեղմ ժպիտ, մի հյութալի կատակ, մի չվիրավորող հեգնություն, և նսեմ զայրույթը փոխվում էր վսեմ հանգստության: 5. Պատահում էր, որ աչքերի փայլատակումին հաջորդում էր դանակի փայլատակում. այդ երկու փայլակներին ընդառաջ էր գնում նա սրերից ավելի հզոր կատակով, և տիրում էր խորին խաղաղություն:

6. Այն օրերից մինչև հիմա էլ ես հիանում եմ նրա հզոր ջղերով և եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:

II

1. Գևորգը մեծ կրքեր չուներ: 2. Նրա ամենամեծ կիրքը չամիչն էր: 3. Նա սիրում էր չամիչ: 4. Չամիչը ուտելիք չէր նրա համար, այլ մի ուրիշ բան: 5. Սակավակեր, ընտրությամբ ուտող, բայց չամիչի համար տածում էր նա բոցավառ կիրք: 6. Չամիչը երազի կապույտ թռչունն էր:

7. Նա չամիչի հետ փոխում էր ամեն ինչ. իր ունեցած ամենաթանկագին իրը կարող էր վտանգել, եթե մեկը նրան դյութեր չամիչով:

8. Երբ հիվանդ էր լինում, և նրան հարցնում էին՝ չամիչ կուզե՞ս, և ինքը պատասխանում էր՝ ո՛չ, հայրս անմիջապես կարգադրում էր վազել բժշկի հետևից:

9. Եվ չամիչով փորձում էին նրա առողջանալը:

10. – Ի՞նչ ես ուզում,– հարցնում էր մայրս:

11. Գևորգի սև աչքերը փայլում էին.

– Չամիչ եմ ուզում:

17 Հեղինակը Գևորգին նկարագրելիս խոստովանում է, որ՝

1) Գևորգն իր համար եղել է իր բոլոր եղբայրների մեջ ամենասիրելին:
2) Գևորգը հաճախ էր զայրանում, բայց ինքը նրան երբեք տանը զայրացած չի տեսել:
3) Գևորգը շատ էր սիրում տարբեր քաղցրավենիքներ ճաշակել:
4) Գևորգին հակառակ՝ ինքը չունի ամուր նյարդեր:

18 I հատվածի ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:*

1) 3
2) 4
3) 5
4) 6

19 I. 4 նախադասության մեջ քանի՞ ածական կա:

1) 2
2) 3
3) 4
4) 5

20 I հատվածի ո՞ր նախադասության մեջ կապ կա:

1) 1
2) 2
3) 3
4) 4

21 II հատվածի ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ ***չկա:***

1) 2
2) 3
3) 6
4) 8

22 I. 4 նախադասության մեջ ի՞նչ պաշտոն է կատարում ***Գևորգին*** բառը:

1) հանգման անուղղակի խնդիր
2) ուղիղ խնդիր
3) ենթակա
4) բացահայտիչ

23 I. 1 նախադասության մեջ ինչպիսի՞ անդամ ***չկա:***

1) ուղիղ խնդիր
2) անջատման անուղղակի խնդիր
3) տեղի պարագա
4) ժամանակի պարագա

24 Ι. 3 նախադասության մեջ քանի՞ ենթակա կա:

1) 2
2) 3
3) 4
4) 5

25 Երբ Գևորգը հիվանդ էր լինում, ո՞ր դեպքում էր հայրը անհանգստանում և բժիշկ կանչում:

Պատասխան՝ _____

26 Ι. 5 նախադասությունից դո՛ւրս գրիր այն հոգնակի բառաձևը, որում գաղտնավանկ կա:

Պատասխան՝ _____

27 Գրի՛ր ***բերկրանք*** բառի որևէ հոմանիշ:

Պատասխան՝ _____

28 Ι հատվածից դո՛ւրս գրիր հականիշ բառեր:

Պատասխան՝ _____

29 ΙΙ հատվածից դո՛ւրս գրիր որոշյալ առումով դրված անորոշ դերբայը:

Պատասխան՝ _____

30 ΙΙ հատվածից դո՛ւրս գրիր 1 անորոշ դերանուն:

Պատասխան՝ _____

31 Ι. 4 նախադասության ստորոգյալները ո՞ր ժամանակաձևով են դրված:

Պատասխան՝ _____

32 Ι հատվածից դո՛ւրս գրիր պատճառական բայը:

Պատասխան՝ _____

2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Հայոց լեզու

Մաս 1

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

13 .....

14 Սխալ է՝ .....

Պետք է լինի՝ .....

15 Սխալ է՝ .....

Պետք է լինի՝ .....

16.

1. .....

2. .....

3. .....

4. .....

Լրացնում է ստուգողը

Միավորը՝ 1-12-ում

		16
13	☐	1 ☐
14	☐	2 ☐
		3 ☐
15	☐	4 ☐

Միավորը՝ 13-16-ում

Մաս 2

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	17	18	19	20	21	22	23	24	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Ուղղանկ դաշտ՝ 1-12 և 17-24 առաջադրանքների համար

1	☐	1	☐
2	☐	2	☐
3	☐	3	☐
4	☐	4	☐

Միավորը՝ 17-24-ում

Կարճ պատասխանով առաջադրանքներ

25 ..... 29 .....

26 ..... 30 .....

27 ..... 31 .....

28 ..... 32 .....

25	☐	29	☐
26	☐	30	☐
27	☐	31	☐
28	☐	32	☐

Միավորը՝ 25-32-ում

Հանձնաժողովի անդամներ՝

1. .....

2. .....

Հանձնաժողովի նախագահ՝ .....

Գնահատականը		Միավորների գումարը	